ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հուլիսի 30-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<**ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44>>**

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի հուլիսի 28-ին ստացված հարցադրման վերաբերյալ տեղեկատվությունը.

Հարցադրում 1

<<Հարգելի պատվիրատու
Մրցույթի հրավերի ՄԱՍ II հավելված 1.1 –ում Ձեր կողմից ներառված է պահանջ
* Մասնակիցը պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և (կամ) ֆիրմային անվանման և (կամ) մակնիշի և (կամ) արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվություն:

Խնդրում ենք պարզաբանել , արդյոք բավարար կլինի հավելված 1.1 –ի հետ ներկայացնել արտադրողի ապրանքային մասնագիրը (спецификация) >>:

Պարզաբանում 1

Մասնակիցը հայտը պետք է կազմի և ներկայացնի <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան:
Հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ գլխի 4.3 կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և/կամ/ ֆիրմային անվանումը և/կամ/ մակնիշը և/կամ/ արտադրողի անվանումը **(<u>այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր</u>):**
Հրավերի ՄԱՍ II-ի 2-րդ գլխի 2.2 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի **<u>ամբողջական նկարագիրը</u>**՝ համաձայն հավելված N 1.1-ի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-783:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

<<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: